

Աստղիկ Ա. Բաբաջանյան, Արտավազդ Ս. Զաքյան

ՍԵԼԻՄԻ ՔԱՐԱՎԱՆԱՏԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Բանալի բառեր – հնագիտություն, պեղումներ, ճարտարապետություն, կցակառույց, հյուրատուն, Սելիմ, քարավանատուն, խեցեղեն գտածոներ:

Մուտք. պատմաճարտարապետական ակնարկ



Սելիմի քարավանատունը հարավից

Սելիմի հյուրատունը¹ Հայաստանի միջնադարյան այն եզակի քարավանատներից է, որ մեզ է հասել կանգուն վիճակով: Այն գտնվում է Սելիմի կամ Սուլեմայի լեռնանցքի՝ դեպի Վայոց ձոր նայող հարթության վրա (ծովի մակարդակից 2410 մ բարձր)՝ քարավանային կանգառ հանդիսանալով Դվինից Պար-

տավ գնացող երկու հին ճանապարհներից մեկի՝ Գեղարքունիք–Սյունիք գծամասի վրա²: Սելիմի հյուրատունը պատկանում է քարավանատների միադահլիճ–եռանավ տիպին, բաղկացած է հիմնական մասնաշենքից, նրան արևելյան կողմից կից նախասարահից և վերջինիս հարակից կիսավեր կառույցից: Այն մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես թաղածածկ մատուռ³: Համաձայն նախասարահի երկլեզվյան (հայերեն և պարսկերեն) արձանագրության՝ Սելիմի քարավանատունը կա-

Հ (ՃԲ) քարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014
Չ (ՃԲ) քարի, թիվ 2 (ՃԲ) համահայկական համբեր

*Հոդվածն ընդունվել է տպագրության 28.11.2014:

1 Տեն Ալիշան Պ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 163–166, նկ. 55; Материалы по Археологии Кавказа, т. XIII, М., 1916, с. 116–118, рис. 57, таб. 32; Токарский Н., Архитектура древней Армении, Ереван, 1946, с. 245; Якобсон А., Очерки по истории зодчества Армении V – XVII вв., М. – Л., 1950, с. 108, р. 86–87; Буниатов Н., Яралов Ю., Архитектура Армении, М., 1950, с. 92, р. 73–74; Арутюнян В., Сафарян С., Памятники армянского зодчества, М., 1951, с. 65–66, р. 60, таб. 167–168; Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Եր., 1955, էջ 72–74, աղ. 39–42; Հարությունյան Վ., Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960, էջ 17–26:

2 Տեն Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 194–197:

3 Տեն Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 22, նկ. 5:

ուուցել է Չեսար Օրբելյանը 1332 թ. «ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՀԶԱԻԲԻՆ ԱՅ Ի ԹՎ ԶԶԱ(1332) ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ԲՈՒՍԱԻԳ ՂԱՆԻՆ, ԵՍ ԶԵՍԱՐ, ՈՐԳԻ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ ԼԻՊԱՐՏԻ ... ՅԱԶԳԷ ԱՌԻՊԷԼԷՆՑ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՄ ԽՈՐԻՇԱՀ, ... ՇԻՆԵՑԱԲ ԶՀՈԳԵՏՈՒՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՑ ՄԵՐ ... Ի ԹՎԻՍ ԶԶԱ (1332) »⁴:

Մոնղոլական արքունիքի նկատմամբ վարած ձկուն քաղաքականության շնորհիվ Օրբելյանները, XIII դ. կեսերին Ջաքարյանների հետ միջֆեոդալական պայքարում գերապատվություն ստանալով, աստիճանաբար ընդլայնում են իրենց տիրույթները Ջաքարյանների և նրանց վասալ Պոռոշյանների հաշվին: XIV դ. սկզբին «...լաւագոյն կացութիւն մը կրտիրէր Մինիքի կողմերը, որ Արևելեան հայութեան կեդրոն դարձած էր Օրբելեանց իշխանութեանց ներքև»⁵, որը նպաստեց լայնածավալ շինարարությանը: Շինարարական աշխատանքներ են ծավալվում Օրբելյանների ճյուղավորումների՝ Բուրթելյանների (կենտրոնը՝ Նդեգիս), Ջալայանների (կենտրոնը՝ Չիվա), Լիպարիտյանների (կենտրոնը՝ Հորս⁶) տիրույթներում: Լիպարիտի (Սմբատ արքայի (1253-1273) եղբոր՝ Իվանեի որդին) և նրա ժառանգների սեփական տիրույթներն ընդգրկում էին այժմյան Սալի, Հորս, Լեռնանցք (Աղքենդ), Քարագլուխ գյուղերը և Սելիմի քարավանատունը⁷: Չեսար իշխանը⁸ Օրբելյանների այս ճյուղի հայտնի ներկայացուցիչն էր, որի մասին վաղագույն վիմագիր արձանագրությունը՝ «**ԶԿ: (1311) իշխանութ/ի/ն. պարոն Չէսարին.**»⁹, փորագրված է Գլաձոր գյուղի հարավարևմտյան եզրի՝ «Վարդանի բերդ» կոչվող վայրում կանգնեցված խաչքարի վրա: Վիմական արձանագրություններում Չեսարի անունը վերջին անգամ վկայված է Հորս գյուղում. «**ԹՎ ԶՂԸ (1349) իշխանութ/եամ/բ պարոն Չեսարին,**»¹⁰, որից հետո աղբյուրները նրա մասին լռում են:

Մինչ բուն պեղումներին և դրանց արդյունքներին անդրադառնալը մի քանի դիտարկում կատարենք հյուրատների և նրանց գործառնական նշանակության վերաբերյալ¹¹, որը, կարծում ենք, մեծապես կօգնի պար-

4 Տե՛ս **Ջալալեան Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. II, Թիֆլիս, 1858, էջ 164; **Քաջբերունի**, «Փորձ», 1879, թ. 9, 115; **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 164-165; «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց **Բարխուդարյան Ս.**, Եր., 1967, էջ 177-178, արձ. 545:

5 Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, մ. 1, Կ.Պոլիս, 1912, էջ 1726:

6 Հորս գյուղը Չեսարի և ընդհանրապես Լիպարիտյանների գահանիստ կենտրոնն էր, ուր մինչ այժմ կիսավեր վիճակում պահպանվել է գեղեցիկ շքամուտքով պալատը, որը XIII-XIV դդ. քաղաքացիական ծարտարապետության լավագույն նմուշներից է: Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, էջ 166:

7 Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII - XV դդ.), Եր., 1981, էջ 108:

8 Արատեսում Պողոս գրչի կողմից ընդօրինակված 1310 թ. ավետարանի հիշատակարանում վկայված է պարոն Չայսարը Բուրթել և Բուղտա եղբայրների հետ: 1461 թ. Սրկղունքում Դավիթ գրչի ձեռքով ընդօրինակած ավետարանում հիշատակվում է Ջէսար ձևով: Տե՛ս **Խաչիկյան Լ.**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451 - 1480), Եր., 1958, էջ 157:

9 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, էջ 102, արձ. 290, նկ. 115; **Հովսեփյան Գ.**, Խաղբակյանք կամ Պոռոշյանք հայոց պատմության մեջ (պատմագիտական ուսումնասիրություն), մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 40:

10 Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ III, էջ 166, արձ. 512, նկ. 190, «Վիմական տարեգիր», Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեց **Կոստանեանց Կ.**, Ս.-Պետերբուրգ, Տպարան Գիտությանց ձեմարանի Կայսերականի, 1913, էջ 169, արձ. 1349:

11 Ավելի շատ ուշադրություն ենք դարձրել քարավանատան կցակառույց շինության գործառնական նշանակությունը:

զելու կիսավեր շինության նշանակությունը:

1. Հյուրատների տեսակները և նրանց գործառնական նշանակությունը

Ֆեոդալական քաղաքների ձևավորման և ներքին ու արտաքին առևտրի զարգացման հետ լայն թափով զարկ է տրվում հյուրատների շինարարությանը, որոնք տեղակայվում էին առևտրական խոշոր մայրուղիների վրա՝ սպասարկելով ոչ միայն այստեղ հանգրվանող օտարականներին, այլև հիմնականում ունեին առևտրական գործարքներ իրականացնող հաստատության կարգավիճակ: Միաժամանակ կառուցվելով այդ նույն ճանապարհների ռազմաստրատեգիական կարևոր հենակետերում, քարավանատներն իրենց ճարտարապետական լուծմամբ ամրացված կառույցներ էին հիշեցնում՝ ապահովելով հանգրվանած քարավանների անվտանգությունը (Վաղարշավան¹², Արուճ¹³): Քաղաքային բնակավայրերից ու ամրոցներից որոշակի հեռավորության վրա գտնվող հյուրանոցները ավագակային հարձակումներից պաշտպանելու համար դրանց կից կառուցվում էին հատուկ շինություններ՝ պահակատներ: Այդպիսի սենյակ կցված էր Թալինի քարավանատան արևելյան եռանավ դահլիճի հարավարևելյան անկյանը¹⁴:

Բացի առևտրական ճանապարհների հետագծի վրա տեղակայված քարավանատներից, հյուրատներ գործում էին մեծ ու փոքր քաղաքներում, վանական համալիրներում: Վանքերի տարածքում կամ նրանց մերձակայքում կառուցված հյուրատները սպասարկում էին ոչ միայն ուխտավորներին, այլև այդ տարածքով անցնող քարավանները: Վանքապատկան հյուրատները բավական եկամտաբեր հաստատություններ էին, որոնք ձեռք էին բերվում նվիրատվությունների միջոցով¹⁵ և նույնիսկ առուծալի առարկա էին դառնում¹⁶: Հյուրատներն, ըստ իրենց դերի ու նշանակության, տարբեր բնույթի էին: Վիմագիր արձանագրություններում հիշատակվում են **հոգետուն, պանդոկ (փնդոկ), խանապար** բառերը (վերջին երկուսը վերաբերում են քաղաքային հյուրատներին): Հոգետուն ձևով հիշատակություն պահպանվել է, ինչպես վերը նշեցինք, Սելիմի քարավանատան նախասրահի ներսում՝ եռանավ դահլիճի հարավային պատի հայերեն արձանագրության մեջ և Դդնաշեն գյուղից 12 կմ հյուսիս գտնվող քարավանատան շրջակայքից 1957 թ. հայտնաբերված խաչքարի վրա. «...մանդատուրտուխուց/խին որդոյ Հասանայ Կայեն/եցո շինեցի զհոգետունս ի/ մեջ լերանց ...»: Նույն քարավանատան ավերակներից քիչ հեռու ևս մի քարի վրա կարդացվում է. «Հոգո տուն»¹⁷:

12 Տեն Հարությունյան Վ., նշվ. աշխ., նկ. 43:

13 Տեն նույն տեղում, նկ. 22:

14 Տեն նույն տեղում, էջ 59, նկ. 54:

15 Տեն «Վիմական տարեգիր», էջ 20-21, 22, 59:

16 Տեն Մաթևոսյան Կ., Բագնայրի վանքի հազարամյակը (1010-2010), «Էջմիածին», 2010, Բ, էջ 68; Մարգիսենյան Ն., Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 187:

17 Տեն Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 12, 45-46; Հարությունյան Ա., Դիտարկումներ միջնադարյան Հայաստանի հյուրանոց-հյուրատների և դրանց վիմագրերի շուրջ, Էջմիածին,

Հոգետունը կազմված է հոգի-շունչ և տուն-հանգրվան բառերից, այսինքն՝ շունչ քաշելու, հանգստանալու տեղ:

Քաղաքային հյուրատները՝ փնդուկներն ու խանապարները, թեև ընդհանուր առմամբ նախատեսված էին հյուրեր ընդունելու համար, սակայն միանգամայն տարբեր կառուցվածք ու գործառնական նշանակություն ունեին: Փնդուկները նախատեսված էին մարդկանց իջևանելու, նրանց սննդի և այլ կարգի սպասարկության համար, իսկ խանապարները հարմարեցված վաճառատներ էին՝ ներքին բակով և առևտրական գործարքներ կատարելու համար կառուցված կուղպակներով ու հուճրաներով¹⁸: Վերջինս պարսկերեն թարգմանությամբ նշանակում է քարավանատներում եղած սենյակ կամ կուղպակ-խանութ, որը սովորաբար խորշի ձևով բացվում էր բակի կամ փողոցի վրա: Ն. Մառը և Հ. Օրբելին այսպիսի թաղակապ սենյակներ նկարագրում են Անիի պեղումների ժամանակ բացված խանապարում¹⁹:

2. Քարավանատան պեղումները



Կցակառույցի հարավային պեղված հատվածը


1956-1959 թթ. իրականացվել է քարավանատան հիմնական մասնաշենքի և նախարահի կամարների ու թաղերի քայքայված հատվածների վերանորոգում, որին զուգահեռ կատարվել են ներսի ու դրսի մաքրման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի համատեղ արշավախումբը (ղեկ.՝ Ա. Զաքյան, ճարտ.՝ Ա. Աբրահամյան) 2012 թ. իրականացրեց քարավանատան պեղման աշխատանքները, որոնք հետախուզական բնույթ էին կրում՝ հիմնական նպատակ ունենալով ձգգրտել նախարահին արևելքից կից շինության գործառնական նշանակությունը, ինչպես նաև ստուգել շինության հիմքերի ամրությունը, պատի շարվածքի կառուցողական կերպը: Այդ իսկ պատճառով հետախուզահորեր փորվեցին քարավանատան հիմնական մասնաշենքի հարավային ճակատին՝

2010, Ժ, էջ 131:

18 Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 117; **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., հ. 2, Եր., 1964, էջ 48:

19 Տե՛ս **Մարր Կ.**, Անի. Книжная история города и раскопки на месте городища, Ереван, 2011, с. 71-72; **Օրбели Ի.**, Избранные труды, Ереван, 1963, с. 118-119; **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Եր., 1942, էջ 350-351; **Առաքելյան Բ.**, նշվ. աշխ., էջ 49:



երկու, արևմտյան, հյուսիսային ձակատներին, հյուսիսարևմտյան և հարավարևմտյան անկյուններում՝ մեկական (Աղ. 1): Հիմնական աշխատանքները կենտրոնացվեցին կիսավեր կցակառույցի հարավային ձակատի ուղղությամբ՝ մուտքի հստակեցման, նրա և նախասարահի միջև կապի ճարտարապետական լուծումները ձգբոտելու նպատակով: Կցակառույց շինության հարավային ձակատային պատի երկայնքը պեղվեց թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ:


Հուշարձանը տեղադրված է թեք ռելիեֆի վրա. գլխավոր մասնաշենքի հետախուզահորերի հատույթում հնարավոր եղավ ամրագրել հարավային և հյուսիսային կողմերի կուտակված հողի շերտի նիշերի տարբերությունը՝ մոտ 2,5մ: Հետախուզահորերի կտրվածքում պարզորոշ նկատվում է, որ հիմնական մասնաշենքի պատերը ներքևի հատվածներում (2-3 շար) շարված են կոպտատաշ քարերով: Դա վկայում է, որ Սելիմի քարավանա-

տունը, ինչպես և Հարժիսինը, որոշ մասով կիսագետնափոր է եղել:


3.9 x 9.3 մ ներքին չափերով թաղածածկ (ներկայումս կիսավեր) կցակառույց շինությունը տեղակայված է նախասարահի արևելյան պատին կից, որի հարավային պատի արտաքին և ներքին կողմերի պեղումներն հիմնականում ուղղված էին ենթադրյալ մուտքի առկայությունն ամրագրելուն: Վ. Հարությունյանի չափագրության համաձայն՝ կցակառույցն առանձին մուտք է ունեցել հարավային կողմում (Գծ. 1):

Քարերի և հողի հեռացման աշխատանքների ժամանակ ամբողջությամբ բացվեց մոտ 1 մ բարձրությամբ հարավային պատը, որտեղ մինչև այժմ արված գծագրերում ներկայացված մուտքն այդպես էլ չհայտնաբերվեց: Մուտքն իրականում ուրվագծվեց կցակառույցի արևմտյան պատին, որը երկու աստիճանով բարձրանում և բացվում է դեպի նախասարահ (Գծ. 2)²⁰:

20 Չափագրությունը կատարել է ճարտ. Ա. Աբրահամյանը:



Գծանկար 1



Գծանկար 2

Թաղածածկ շինության, մասամբ և հիմնական մասնաշենքի հարավարևմտյան հետախուզահորում պեղումների արդյունքում հայտնաբերված նյութի ճնշող մեծամասնությունը խեցեղեն գտածոներն են: Կան փոքրաքանակ մետաղե հավաքածու, որը կազմված է դռան տղնակի տարբեր հատվածներից, մեկ մախաթից, բազմաթիվ մեծ ու փոքր գամերից ու եզան պայտերից, որոնցից երկուսի վրա առկա են գամերը (Աղ. II, Նկ. 1-4):

Քննելով խեցեղեն հավաքածուն, որը խիստ բեկորային է, կարող ենք առանձնացնել միայն սեղանի առօրյա սպասք ծառայող անջնարակ և ջնարակապատ թասեր, քրեղաններ, ջրամաններ ու փոքր կճուճներ, որոնք, ըստ ձևաբանական կերտվածքի, կրկնում են Հայաստանում XIII-XIV դդ. տարածված նմանօրինակ սպասքի ձևերը: Որոշակի խումբ են կազմում փողրակների բեկորները (Աղ. II, Նկ. 6):

Անոթները շատ հաճախ պատված են անգոբով կամ կաթնագույն շփոթով, որը գեղեցիկ տեսք է հաղորդում միաժամանակ կանխելով ջրի արտահոսքը: Ներկայացվող խեցանոթներն ունեն պարզ հարդարում. սափորները հարդարված են թույլ փորագիր գծաքաշ, սանրաքաշ զարդերով, ալիքազարդերով, թեք խորադիր զարդերով: Թասերի ու քրեղանների խմբում հանդիպում են կարմրափայլ և կարմրաներկ օրինակներ, որոնք ներկված են ամբողջությամբ, տեղ-տեղ և ժապավեններով (Աղ. II, Նկ. 7, 10):

Սելիմի քարավանատան կցակառույցի պեղումներով հայտնաբերված խեցեղեն նյութում քիչ են կճուճների գյուտերը: Դրանք պատկանում են նուրբ, փոքրիկ կճուճների խմբին, որոնցով ուտելիք է մատուցվել: Դրանց մեջ առանձնանում է սև փայլեցումով հարդարված և հատվածքում ականջանման կանթով փոքր կճուճի բեկորը (Աղ. II, Նկ. 9):

Գտածոներում հանդիպում են լայնակի ձեղքված անոթների բեկորներ: Այս երևույթը հավանաբար կապված է կատարողական տեխնիկային վարժ չտիրապետելու հետ, քանի որ թե՛ խեցին, թե՛ նրա թրծումը բավականին բարձրորակ են (Աղ. II, Նկ. 8):

Ջնարակապատ խեցեղենը ներկայացված է դեպի դուրս փռված կամ ներձկված պսակ ունեցող տարբեր չափերի թասերի ու քրեղանների տեսակներով, որոնք հարդարման միջոցներով, ջնարակի որակով վերաբերում են XIII դ. կեսերին և XIV դարին: Հետաքրքիր է, որ ջնարակապատ խեցեղեն նյութում չկան XII-XIII դդ. տարածված «ստանդարտիզացված» միագույն և բազմագույն վառ երանգավորմամբ և փորագրագարդով խեցանոթները:

Սելիմի ջնարակած խեցեղենն ամբողջովին վերաբերում է քարավանատան կառուցման ժամանակին՝ XIV դարի սկզբին, երբ տեխնիկական արագ առաջընթացի պայմաններում մեծ թոփչք է կատարվում ջնարակած խեցեղենի արտադրության մեջ: Կապարային ջնարակին զուգահեռ լայնորեն կիրառվում է ալկալիական ջնարակը, որը ստեղծում է ողորկ ապակենման մակերես: Սելիմի ջնարակած խեցեղեն հավաքածուն ներկայացնում է Հայաստանում այդ ժամանակ տեղի ունեցող փոփոխությունների առաջին փուլը, երբ նախորդ շրջանի ավանդույթները համակցվում են նոր տեխնոլոգիական ձեռքբերումներին: Չնայած ավելի որակյալ ու ողորկ ջնարակի ի հայտ գալուն, XIV դարի սկզբին ստեղծված խեցանոթները մեզ են հասել խիստ քայքայված վիճակում, ճաքճքած ջնարակով: Ալկալիական ջնարակի ընձեռած հնարավորություններին խեցեգործ վարպետները միանգամից չէ, որ սկսում են վարժ տիրապետել:

Նոր ջնարակի հմտորեն օգտագործելու գործընթացն աստիճանաբար է տեղի ունենում, որը նկատում ենք և Սելիմի պեղումներից գտնված օրինակներում: Անոթներից մեկը նկարազարդվել է և չի ջնարակապատվել, որի հետևանքով գույները խառնվել են, իսկ պատկերը՝ աղավաղվել (Աղ. III, Նկ. 9):

Հայտնաբերված ջնարակապատ խեցանոթներում հիմնականում կիրառվել է ենթաջնարակային նկարազարդման եղանակը: Առայժմ պեղումներով հայտնի է միայն մի քրեղանի հատակամաս՝ բարձր օղակաձև նստուկով, որը հարդարված է փորագիր գծագրման եղանակով ստեղծված բույսի ոճավորված պատկերով: Անոթը պատված է մանուշակագույն ջնարակով (Աղ. III, Նկ. 1):

Ենթաջնարակային նկարազարդմամբ անոթների վրա հանդիպում են երկրաչափական, բուսական ոճավորված պատկերներ, որոնք զարդարում են ափսեի եզրերը, կենտրոնը կամ տարածվում ողջ մակերեսին: Պատկերները ստեղծվում են անգործի վրա սև գծանկարով և ծածկվում գունավոր, թափանցիկ ջնարակով: Գերիշխող է սպիտակ կամ երկնագույն ետնախորքի վրա մանուշակագույն, շագանակագույն, փիրուզագույն, կապույտ, սև, ձիթապտղի գույներով նկարազարդումը (Աղ. III, Նկ. 2-5, 7): Պեղումներով հայտնաբերվել է նաև կոբալտով նկարազարդ



ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) փայտի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

Վեյն համահայկական հասոցն

հախճապակե քրեղան (Աղ. III, Նկ. 6):

Սելիմի քարավանատան պեղումներից հայտնաբերված ջնարակած և անջնարակ խեցեղենը հիմնականում տեղական արտադրանք է, որի զուգահեռները տեսնում ենք Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված XIII–XIV դդ. նյութում²¹: Ներմուծված խեցեղենից առանձնահատուկ ուշադրության է արժանի ճենապակե պնակի շրթնամասի գյուտը, որը միակն է Սելիմի խեցեղեն հավաքածուում (Աղ. III, Նկ. 8): Այն Սուն (980–1278 թթ.) դինաստիայի ժամանակաշրջանի չինական ճենապակու նմուշ է: Մարմնագույն ետնախորքի վրա սև բարակ գծանկարի միջոցով ստեղծվել է չինական մոտիվներով բնության տեսարան:

Պեղումներով հայտնաբերվել են նաև քարե աշխատանքային գործիքներ, որոնցից մեկը օբսիդիանե կտրող շեղբի մաս է՝ հարավարևմտյան հետախուզահորից (Աղ. II, Նկ. 5):

Հուշարձանի պեղված հատվածները չափագրվելուց հետո ենթարկվել են նախնական ամրակայման:

Այսպիսով, Սելիմի քարավանատան և հատկապես կիսավեր կցակառույց շինության հետախուզական պեղումներով հստակեցվում է, որ մինչ այժմ գիտական գրականության մեջ հայտնի Սելիմի քարավանատան նախասրահին արևելքից կից կառույցը մատուռ չէ: Նախնառաջ, այն չունի քրիստոնեական պաշտամունքային կառույցներին բնորոշ արևելքարևմուտք առանցք, ու թեև պեղումներն ամբողջությամբ ավարտված չեն, սակայն պարզ է, որ արևելյան կողմում շինությունը խորան չի ունեցել:

Հյուրատների նշանակության և ճարտարապետական կառուցվածքի, ինչպես նաև պեղումներով հայտնաբերված նյութի (մեծ մասամբ՝ սեղանի սպասք) քննությունից ելնելով՝ կարող ենք առաջ քաշել մի քանի վարկած կցակառույցի հնարավոր գործառնական նշանակության վերաբերյալ:

1. Կցակառույցը, միջանցիկ դռնով հարակցելով նախասրահի հետ, կարող էր քարավանատան մշտական սպասարկող անձնակազմի համար բնակարան ծառայել:

2. Սեղանատուն, որտեղ կարող էին հանգստանալ և սնվել քարավանան ուղեկցող վաճառականները:

3. Մասնաշենք, որտեղ իրականացվում էին առևտրական գործարքներ, ինչպես քաղաքային խանապարներում կառուցված հուճրաներում:

4. Չի բացառվում, որ այն ծառայել է որպես պահակատուն: Քանի որ Սելիմի քարավանատունն ամրացված չէր, ինչպես օրինակ՝ Արուճի քարավանատունը, ապա հանգրվանող քարավանները ավազակային հարձակումներից պաշտպանելու համար այստեղ կարող էր տեղակայվել մշտական փոքրիկ կայազոր:

Հետախուզական պեղումների արդյունքում ծագած վարկածները

21 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Գառնի IX–XIV դդ., Եր., 1988; **Հարությունյան Ս.**, Ամբերդ, Եր., 1978; **Шелковников Б.**, Китайская керамика из раскопок средневековых городов и поселений Закавказья, СА, N 21, М.–Л., 1954; **Ժամկոչյան Ա.**, Միջնադարյան Հայաստանի հախճապակին IX – XIV դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները» –10, Եր., 1981; **Ղարիբյան Ի.**, Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Եր., 2009, **Բարաջանյան Ա., Միրիջանյան Գ.**, Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, 2013, N 1, էջ 134–150; **Բարաջանյան Ա.**, Հայաստանի ԺԴ. –ԺԷ. դդ. ջնարակած խեցեղենը, «Էջմիածին», 2014, է. էջ 106–123:

կամրապնդվեն կամ կհերքվեն հետագա պեղումների շնորհիվ, որոնք կարող են հստակեցնել մեր պատկերացումները կցակառուցի բուն նշանակության վերաբերյալ և հնարավորություն կընձեռեն նոր և դեռևս անհայտ տվյալներ պարզել՝ ամբողջացնելով նրա պատմամշակութային նկարագիրը:

Աստղիկ Ա. Բաբաջանյան– գիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է Հայաստանի միջին դարերի պատմությունը, հնագիտությունը, մշակույթը: Հանդես է եկել միջնադարյան Հայաստանի նյութական մշակույթին վերաբերող զեկուցումներով ու հրապարակումներով:

Արտավազդ Ս. Զաքյան– գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Ուրարտուի պատմությունը, հնագիտությունը, մասնավորապես Վանի թագավորության զենքն ու ռազմարվեստը:

Summary

RESULTS OF ARCHAEOLOGICAL EXCAVATIONS OF THE SELIM CARAVANSERAI

Astghik A. Babajanyan, Artavazd S. Zaqyan

The complex of Selim caravanserai was built in 1332 by prince Chesar Orbelyan according to the bilingual inscription. It consists of the main three-nave hall, the antechamber and the building adjacent to the antechamber.

In 2012 the joint expedition group of the Institute of archaeology and ethnography NAS RA and “The Service for the protection Historical Environment and Cultural Museums Reservation” Non Commercial State Organization of the RA Ministry of Culture carried out excavations in the territory of the Selim caravanserai. The aim of the excavations was to ascertain the functional role of the building adjacent to the east of antechamber as well as to check the durability of building foundation.

The excavations disproved the identity of the adjacent building as a chapel (which had been known in extant literature), and likewise disproved the presence of the door in the south side as it was marked in past measurements. The entry was found in the west side of the building, which is connected with the antechamber.

The majority of the found artifacts are pottery of the XIII–XIV c. which has parallels in ceramic production of simultaneous monuments of Armenia. A collection of metal artifacts was found, consisting of a large needle, fragments of a door lock, shoes for oxen and stone working tools, as well as a fragment of an obsidian knife blade.

As the results of excavations several versions were raised regarding the functional meaning of the adjacent building (refectory, staff apartments, hall

for commercial exchanges, guardhouse) which will be supported or contradicted by further excavations. The new excavations revealed various previously unknown facts, enriching the historical-cultural description of the Selim caravanserai.

Резюме

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СЕЛИМСКОГО КАРАВАН-САРАЯ

Астхик А. Бабаджанян, Артавазд С. Закян

Селимский караван-сарай был построен в 1332 г. князем Чесаром Орбеляном, о чем свидетельствует двуязычная надпись. Сооружение состоит из главного трехнефного зала, прихожего (сени) и смежной постройки.

Совместная экспедиция Института археологии и этнографии НАН РА и Государственной Некоммерческой организации «Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников» Министерства Культуры РА в 2012 году провела разведочные раскопки на территории Селимского караван-сарая для того, чтобы установить функциональное назначение здания, прилегающего к прихожей с восточной стороны, а также для проверки прочности фундамента главного здания.

Благодаря раскопкам прилегающей постройки был подтвержден тот факт, что данное сооружение, известное по данным научной литературы, не является часовней, и на южном фасаде этого здания не был найден вход, отмеченный на предыдущих чертежах. Дверной проем был выявлен в западной части здания, посредством которого оно соединялось с прихожей.

Найденный в результате раскопок материал состоит в основном из керамики XIII–XIV вв., который находит параллели с керамическими комплексами всех одновременных памятников Армении. Так же были найдены металлические части замков, гвозди, подковы и каменные орудия труда, в том числе фрагмент обсидиановой пластины.

Некоторые гипотезы о функциональном назначении прилегающего здания (трапезная, жилище для обслуживающего персонала, зал для коммерческих сделок, помещение для охраны), возникшие в результате раскопок, будут подтверждены или опровергнуты в ходе дальнейших работ, которые позволят выяснить новые и пока еще неизвестные данные, дополняя историко-культурное описание Селимского караван-сарая.